

1754ին Նալբանի փոխանորդ էր (Նուրտինեան, Երգ Է.): Սամուէլ վ. 1752—6 Երուսաղէմի Պատրիարքին փոխանորդութիւն ըրած է Ի Կ.Պոլիս (Բարգէն վ. «Լոյս» 1905 էջ 967, ուղղելով Ա. Ալպոյաճեանը, որ նոյն փոխանորդաց շարքին մէջ անորոշակի կը նշանակէ զՍամուէլ վ., «Բիւզանդիոն» 1905 թ. 2734): Ըստ Հր. Եսատուրի (Ընդ. Օր. 1901 էջ 144, ասկէ առեալ Բարգէն վ. «Արեւելեան Մամուլ» 1904 էջ 291 ծան.) 1756ին Պրուսայի Առաջնորդ եղած էր «մինչեւ 1780, որմէ ետքը եկաւ հաստատուեցաւ Խասգիւղ, ուր մեռաւ 1786ին, եւ ուր կը գտնուի դեռ իր գերեզմանը»: «Սամուէլ Երզնկացի... անգամ մը Երուսաղէմի, անգամ մը Պոլսի, անգամ մըն ալ Էջմիածնի Կաթողիկոս ընտրուելով՝ երեք անգամուն ալ հրաժարեցաւ, ու մնաց միշտ առաջնորդ Պրուսայի՝ իր վերջին ալեւոր տարիներուն միայն գալով Կ.Պոլիս եւ ըլլալով քարոզիչ Խասգիւղի, ուր եւ վախճանեցաւ ութսունամեայ, եւ թաղեցաւ 1786ին (Յ. Գ. Մրմըրեան, «Մասիս» 1906, Նոր Շրջ. թ. 1 էջ 10): Իսկ ըստ վ. անքեան Արիստակէս Եպիսկոպոսի (անդ) «Սամուէլ Եպիսկոպոս Երզնկացի (1760—1780 առաջնորդ Պրուսայի) — 1748ին արդէն այս պաշտօնին համար կոչուած էր: Յիշատակութիւն մը այնպէս ցոյց կու տայ թէ Կ.Պոլսէն 1760 կամ 61 թուականներուն Պրուսա եկած է: Երկար եւ նշանակելի պաշտօնավարութիւն ունեցած է: Առաջնորդարանը կարգաւորած, ծննդեան